ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2025թ. **N ------ - Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի երկու հազար քսանհինգ թվականի փետրվարի վեցի հ.1-03/27Ա/89/1 գրությունը

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի --------- ----- ի
N --- - Ա որոշման

ՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

դրամ

Հ/հ	Անվանումը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը արժեքը
1	2	3	4	5
1	Համակարգիչներ ՊՐՈՑԵՍՈՐ –Intel G5905 CPU, ՆԵՐՔԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ – 240gb SSD ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ – 8gb RAM (ՕՅՄ) ԷԿՐԱՆ –24 դյույմ FullHD Windows 11 օպերացիոն համակարգ Wi-Fi/Bluetooth, մկնիկ և ստեղնաշար	7	145,543	1,018,801
2	Համակարգիչներ ՊՐՈՑԵՍՈՐ –Intel Core i5 13-րդ սերնդի ՆԵՐՔԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ – 512gb SSD ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ – 8gb RAM (ՕՅՄ) ԷԿՐԱՆ–27 դյույմ FullHD Windows 11 օպերացիոն համակարգ Wi-Fi/Bluetooth, օպտիկական սկավառակակիր, մկնիկ, ստեղնաշար, ականջակալ, բարձրախոս, տեսահեցիկ և UPS	3	258,960	776,880
3	Նոութբուք ՊՐՈՑԵՍՈՐ - intel i7 13-րդ սերնդի ՆԵՐՔԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ - 1TB SSD ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ – 16gb RAM (ՕՅՄ) ԷԿՐԱՆ – 17 դյույմ FullHD Windows 11 օպերացիոն համակարգ Մկնիկ և պայուսակ	1	377,600	377,600
4	Պրինտեր Հիշողություն - 64 ՄԲ Պրոցեսորի հաճախականություն - 500 ՄՀզ	1	60,000	60,000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**12**		**2,233,281**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանում համայնքային էներգետիկ կառավարման համակարգի ներդրման և կայացման նպատակով 2021թ. փետրվարի 26-ին Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի միջև ստորագրվել է Մտադրությունների մասին հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր), որի ներքո վերջին երեք տարվա ընթացքում ինտենսիվ աշխատանքներ են տարվել՝ համայնքային ենթակայության կազմակերպությունների վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառման ելակետային տվյալների հավաքագրման, նշանակված պատասխանատուների վերապատրաստան ու կարողությունների զարգացման մասով: Առաջիկայում կգործարկվի նաև Էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ ԷԿՏՀ)՝ հնարավորություն ընձեռելով ունենալ միասնական բազա և կիրառել վերլուծական գործիքներ:

Ծրագիրը գործարկելու, էներգետիկ տվյալների ու ցուցանիշների պարբերաբար փոխանցումը և այլ անհրաժեշտ գործընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ է բոլոր համայնքապատկան կառույցներին ապահովել համակարգչային սարքավորումներով:

Հուշագրի շրջանակում նշանակված էներգետիկ կառավարչի կողմից իրականացված կարիքների գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ տեխնիկական հագեցվածության կարիք ունեն Ավան վարչական շրջանի թվով 7 մանկապարտեզ (հ. 51, 52, 53, 54, 55, 56, 57) և «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի էներգետիկ կառավարման թիմը (3 աշխատակցի):

Հաշվի առնելով վերոգրյալը նախատեսվում է որոշման հավելվածում նշված գույքը նվիրատվությամբ ընդունել Երևան համայնքի հաշվեկշիռ, որից հետո դրանք անհատույց օգտագործման իրավունքով կհանձնվեն վերոնշյալ մանկապարտեզներին և «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ